Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՃ-1 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

Միջոցառման անվանում	«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում»
Դրամաշնորհի N	Լոտ 9. Երևան - ճաշարան
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն
Միջոցառման իրականացման ժամանակահատված	01.01.2024-31.12.2024թթ.
Հաշվետու ժամանակահատված	01.10.-30.12.2024թթ.
Ներկայացման օր	16.12.2024թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Մարգարիտ Հովհաննիսյան սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 200 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 3 դեպքի վարում՝ 2 վերափաստագրման կազմակերպում և 1 շահառուի համար նոր անձնագրի ստացում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 25 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 6 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել և 4 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 7 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող խմբակներին (գրական, կար, պար, հմուտ ձեռքեր, հիշողության ակումբ, հոգևոր զրույցներ, երգ, առողջ ապրելակերպ, հոգեբանի անկյուն, կինեզոլոգիա):
    Ճաշարանի 44 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝
    - «Շող» ցերեկային կենտրոնի երեխաների այց
    - «Գոհարներ» երգչախմբի համերգ
    - Ուխտագնացություն դեպի Էջմիածին
    - Տարեցների միջազգային օրվան նվիրված Միջոցառում Ավան ցերեկային կենտրոնում:
    - Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «Երևանցի տարեցներ» սպորտային մրցույթին:
    - Էքսկուրսիա Լոռի Հաղպատ, Սանահին, Թումանյանի տուն-թանգարան:

    Թվով 17 շահառու (շարունակական) օգտվել է բաղնիքի ծառայությունից:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը՝

- ✓ Ուխտագնացություն դեպի Էջմիածին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/clnbtd)
- ✓ «Գոհարներ» երգչախմբի համերգին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/plydje
- ✓ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «Երևանցի տարեցներ» սպորտային մրցույթին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/eemurz)
- ✓ Մեր առօրյան Ավան ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/xvujcf)
- ✓ Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում Ավան ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/xvujcf)
- ✓ Էքսկուրսիա Լոռի՝ Հաղպատ, Սանահին, Հ. Թումանյանի տուն-թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/oncjhv)

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

- ✓ Երևանում գործող բոլոր ճաշարանների խոհարարները մասնակցել են «Առողջ սնուցման հիմունքները» մասնագիտական ինտերակտիվ եռօրյա դասընթացին, որը կազմակերպվել էր The holy digital-ի հետ համատեղ:
- ✓ Չորրորդ եռամսյակի ընթացքում հոգեբանը սեփական նախաձեռնությամբ անցել է 3 ժամ անհատական սուպերվիզիա, 2 ժամ խմբային սուպերվիզիա և 6 ժամ բալինտյան խումբ:
- ✓ Հոգեբանի մասնակցությամբ ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնում կայացած «Բրեյնսփոթիգ միջազգային ինտենսիվ» :
- ✓ Սոցիալական աշխատողները ամեն ամիս մասնակցել են ՄՍԾ խորհրդատվական նիստին:
- ✓ «Նռնենի» համայանքային կենտրոնում աշխատողների համար կազմակերպվել է հերթական հոգեբանական թրեյնինգը՝ ուղղված միջանձնային փոհարաբերությունների բարելավմանը, կոնֆլիկտների հաղթահարմանը:
- ✓ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների կարիքների գնահատման նպատակով պաշտպանության մոնիթորինգ է իրականացվել Թիմ լիդերի՝ Անահիտ Մխիթարյանի, սոցիալական աշխատողներ՝ Դեզդեմոնա Ասատրյանի և Նարինե Չախոյանի կողմից:

- ✓ Առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն (ԱՔՀՀ) Նոյեմբեր 1 և 2, 2024թ: Դասընթացավար՝ Դր.ԴիմաԹուհամին հետդոկտորական հետազոտական համագործակցող է վերականգնողական և առողջ ծերացման գծով, ծրագրի համակարգող Լյուցեռնի համալսարանում, Շվեյցարիա: Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ Տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի նիստին մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպումների շարունական մասնակցություն՝ Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիան, Գերիատրիայի և գերոնտոլոգիայի հայկական ասոցիացիայի և Հայ օգնության ֆոնդի հետ միասին, «Գերիատրիա. համակողմանի մոտեցում հիվանդությունների կառավարմանը» խորագրով ամենամյա կոնֆերանսին մասնակցել են Նոնենի Ցկ-ի բուժքույրերը եւ Նոր Նորք սուպերվիզորը:
- ✓ Պաշտպանության մոնիթորինգ է իրականցրել Նոր Նորք եւ Ավան սպասարկող սոցիալական աշխատողների կողմից՝ Մարգո Աբաղյան, Հասմիկ Ադամյան:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

h/h	Մատուցվող ծառայության անվանումը	Ծառայություն ստացած անձանց թիվը
1.	հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը	200/198
1.1	այդ թվում՝ կին	148
1.2	այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան	51
1.2.1	այդ թվում՝ կին	32
1.2.2	18-40 տարեկան	10
1.2.3	40-65 տարեկան	41
1.3	65 տարեկանից բարձր	113
1.4	երեխաներ (միայն ճաշարանի պարագայում)	-
2.	մեկանգամյա սննդի տրամադրում	200
3.	Այլ ծառայություն (նշել) Ժամանցի կազմակերպում Բաղնիքի ծառայություն Հոգեբանական ծառայություն	 44 17 6

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «16» 12.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)